Հարկային տեղեկատվական համակարգ
www.taxinfo.am

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունված է
16 դեկտեմբերի 2016 թ.

**Հոդված 1.** «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-209-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասի «, եթե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը, սույն օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան, կատարել է արտոնագրային վճարի վճարում, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի» բառերը հանել և ուժը կորցրած ճանաչել երկրորդ պարբերությունը.

2) 5-րդ մասի «, եթե անհատ ձեռնարկատերը, սույն օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան, կատարել է արտոնագրային վճարի վճարում, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի» բառերը հանել և ուժը կորցրած ճանաչել երկրորդ պարբերությունը:

**Հոդված 2.** Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ, 2.1-ին, 3-րդ մասերը, 8-րդ հոդվածը, 9-րդ հոդվածի 3-5-րդ և 10-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և կիրառվում է 2017 թվականի արտոնագրային վճար վճարող համարվելու ժամանակահատվածների նկատմամբ: 2017 թվականի արտոնագրային վճար վճարող համարվելու ժամանակաշրջանի համար Օրենքի 1-ին հավելվածով սահմանված գործունեության տեսակների մասով արտոնագիրը տրամադրվում է առանց արտոնագրային վճարի վճարման:

**Հայաստանի Հանրապետության
Նախագահի** **Ս. Սարգսյան**

30 դեկտեմբերի 2016 թ.
Երևան
ՀՕ-262-Ն